Հաստատված է «Ուրարտու» համալսարանի

Գիտական խորհրդի 2014թ. հուլիսի 11-ի նիստում

Ռեկտոր՝ Ս.Ս. Սեդրակյան

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում գնահատող հետազոտությունների մեթոդաբանություն

Գնահատող հետազոտությունների մեթոդաբանությունը գործիք է, որն օգնում է «Ուրարտու» համալսարանի աշխատակիցներին հասկանալու, թե ինչպես իրականացնել որակի գնահատմանն ուղղված գործունեություն: Այն վերաբերում է գնահատման յուրաքանչյուր նախաձեռնության: Հետևելով այս մեթոդաբանությանը՝ համալսարանի աշխատակիցը կարող է սովորել, թե ինչ է անհրաժեշտ իմանալ համալսարանում տեղի ունեցող ներքին գործընթացների որակը չափելու համար:

Գնահատման մեթոդաբանությունը

Գնահատման մեթոդաբանությունը ներառում է չորս հիմնական քայլեր մի շարք ենթաքայլերով: Մեթոդաբանությունը հետևյալն է.

1. Սահմանեք գնահատման չափանիշները

Անհրաժեշտ է սահմանել

- գնահատման կարիքը
- գնահատման արդյունքների հետագա կիրառելիությունը
- ինչ է անհրաժեշտ հետագայում զեկուցել գնահատման մեջ ներգրավված կողմերին և ում կողմից
- սահմանել ընթացակարգ՝ քայլերի մասնավորեցված հաջորդականություն, որին անհրաժեշտ է հետևել գնահատումն իրականացնելու համար:

2. Որոշակիացրեք գնահատման մեթոդները

Անհրաժեշտ է

- առանձնացնել գնահատման չափանիշները
- յուրաքանչյուր չափանիշի գնահատման համար որոշակիացնել ընտրանքային համախմբությունը
- հասկանալ, թե ինչպես է անհրաժեշտ հասնել ընտրանքային համախմբությանը՝ խորքային տեղեկատվություն ստանալու նպատակով, ստանդարտացված տեղեկատվություն վերհանելու համար և այլն (սրանից է կախված, թե գնահատման շրջանակներում ինչ մեթոդներ է անհրաժեշտ կիրառել՝ խորին հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, կիսաստանդարտացված, կամ էլ ստանդարտացված հարցումներ և այլն)
- կազմել գնահատող հետազոտության պլան՝ դրանում հատուկ նշելով գնահատման փուլի անվանումը, ընտրանքային համախմբությունը, որը ներառված է գնահատման մեջ և տեղեկատվության հավաքման մեթոդները, որոնք մասնավորապես սահմանում է գնահատող անձը, կամ գնահատող հանձնախումբը՝ տրամադրելով համապատասխան հիմնավորում:

3. Հավաքագրեք տվյալները

Անհրաժեշտ է

- մեկտեղել գնահատման մեթոդների կիրառման արդյունքում ստացված տեղեկատվությունը՝ աուդիո, վիդեո ձայնագրություններից, գնահատողների գրառումներից և այլն
- ընդհանրացնել տեղեկատվությունը
- առանձնացնել հիմնական արդյունքները:

4. Զեկուցեք և կայացրեք որոշումներ

Անհրաժեշտ է

- հիմնվելով տվյալների մեկտեղման, ընդհանրացման վրա՝ ստեղծել վերլուծական զեկույց և ներկայացնել այն գնահատման մեջ ներառված, ինչպես նաև գնահատման արդյունքներով հետաքրքրված կողմերին

Մանրամասներ գնահատող հետազոտությունների մեթոդաբանության շուրջ

ա/ Յուրաքանչյուր գնահատող հետազոտություն սկսելուց առաջ հարկավոր է նախապահմանել գնահատման անհրաժեշտությունը՝ կարիքը: Եթե կարիք չկա հետազոտմամբ տվյալներ վերհանելու և իրականացվելիք գնահատման հիման վրա որոշումներ չեն կայացվելու, ապա գնատող հետազոտություն իրականացնելու նախաձեռնությունն անիմաստ է: Այն պետք է բխի համալսարանի կազմակերպական, ինստիտուցիոնալ կարիքներից: Հետազոտության հստակ նպատակ ունենալը գնահատման գործընթացի կառուցվածքայնացման և հաջող իրականացման հիմքն է:

բ/ Հարկավոր է հստակեցնել, թե հատկապես ինչ է գնահատվելու՝ գնահատման չափանիշների որոշակիացումը խիստ էական է: Այս չափանիշները պետք է լինեն չափելի, բխեն գնահատման նպատակից: Չի կարելի սահմանել ավելի շատ գնահատման չափանիշներ, քան հնարավոր է գնահատել միևնույն հետազոտական նախաձեռնության միջոցով:

գ/ Յուրաքանչյուր գնահատող հետազոտության պարտադիր պայման է, որ վերջինիս միջոցով ստացվող տվյալները հրապարակվեն ու հասանելի լինեն գնահատման գործընթացում ներգրավված բոլոր հետաքրքրված կողմերին: Գնահատման տվյալների հրապարակումը չպետք է խախտի հետազոտության գաղտնիությունը՝ այսինքն հրապարակվող տվյալները պետք է լինեն վերլուծական, ներկայացվեն ընդհանրացված տեսքով՝ չհրապարակելով գնահատման ընթացքում տվյալներ տրամադրած առանձին անձանց/կազմակերպությունների անուններ:

դ/ Գնահատման մեթոդների որոշակիացումը ենթադրում է հստակեցում, թե գնահատվող չափանիշների մասին ինչ միջոցով է հնարավոր վերհանել հավաստի տեղեկատվություն՝ դիտարկումների, գիտափորձերի, ֆոկուս խմբերի, հարցազրույցների և այլնի միջոցով: Հարկավոր է որոշակիացնել գնահատող հետազոտությունն իրականացվելու որակական, թե քանակական մեթոդներով:

ե/ Գնահատող հետազոտությունների արդյունքների հիման վրա ստեղծվող վերլուծական զեկույցը պետք է բավարարի նման փաստաթղթերի ստեղծման միջազգային չափանիշների: Այս տվյալները պետք է լինեն ստուգելի և վավերական, որպեսզի դրանց հիման վրա հնարավոր լինի ապահովել համալսարանի որակի շարունակական բարելավումը՝ կայացնելով համապատասխան որոշումներ:

Գնահատող հետազոտության ծրագրի ձևաթուղթ

1. Գնահատման անհրաժեշտության սահմանում: Պրոբլեմային իրավիճակի նկարագրություն



2. Գնահատման նպատակը



3. Գնահատման խնդիրները



4. Գնահատվող չափանիշները



5. Գնահատման հասցեականությունը՝ ում, ինչին է այն ուղղված, ինչ է ստացվելու գնահատման արդյունքում



6. Գնահատման մեթոդները



7. Գնահատող հետազոտության պլան-ժամանակացույցը՝

ներկայացնել Գանտի աղյուսակի տեսքով: Կարելի է կցել EXEL ֆայլով:

8. Գնահատող հետազոտության իրականացման մատյանը (fieldwork log)՝

լրացվում է հետազոտության իրականացման բուն ընթացքում: Ներառում է նշումներ հետազոտության ընթացքի մասին՝ հետազոտողների, հետազոտվողներին վերաբերող տվյալներ, այլ նշումներ: Կցել WORD, կամ EXEL ֆայլով:

9. Գնահատող հետազոտության արդյունքների վերլուծական զեկույց (analytical report)՝

կցել WORD, կամ PDF ֆայլով: